EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, Համաշխարհային հայկական կոնգրեսը և Ռուսաստանի հայերի միությունը ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ հայտարարում են «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթը:

Մրցույթն ունի 12 անվանակարգ և նվիրված է Գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյա հոբելյանին:

Մրցույթին կարող են մասնակցել մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականները:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է **ս.թ. հունիսի 15-ը**:

Կից՝ հայտարարությունը և դիմում-հայտը՝ 6 էջից:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613 234-3710 Fax: 613 234-3444

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան (ՀՀ ԳԱԱ), Համաշխարհային հայկական կոնգրեսը (ՀՀԿ) և Ռուսաստանի հայերի միությունը (ՌՀՄ), ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ 2013 թ. հայտարարում են «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթ երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) համար: Մրցույթը նվիրվում է ՀՀ ԳԱԱ 70 – ամյակին:

Սահմանված են մրցանակներ 12 անվանակարգերում.

□ ֆիզիկա

□ մաթեմատիկա և մեխանիկա

□ ինֆորմատիկա

□ տեխնիկական գիտություններ

□ քիմիա

□ կենսաբանություն

□ պատմություն

□ սոցիոլոգիա և իրավագիտություն

□ երկրաբանություն

□ արվեստ, լեզու և գրականություն

□ տնտեսագիտություն

□ հայագիտություն և ազգագրություն

Մրցանակային ընդհանուր ֆոնդը կազմում է 12 միլիոն դրամ: Մրցանակակիրները կպարգևատրվեն դրամական պարգևներով և կարժանանան ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ և ՌՀՄ պատվավոր դիպլոմների: Մրցույթին կարող են ներկայացվել միայն 2011–2012 թվականներին հրատարակված գիտական հոդվածներ, հոդվածների շարք, մենագրություններ կամ արտոնագրված աշխատանքներ:

Ներկայացվող փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի այն կազմակերպության գիտական խորհրդի որոշումը, որտեղ աշխատում է հայտատուն: Փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև տվյալ բնագավառում գործող որևէ այլ

կազմակերպության գիտական խորհրդի միջոցով: Ներկայացնող կազմակերպությունը յուրաքանչյուր անվանակարգում կարող է առաջադրել միայն մեկ աշխատանք: Մրցույթի արդյունքները կհայտարարվեն 2013թ. սեպտեմբեր ամսին:

Հաղթող են ճանաչվելու այն հեղինակները (հեղինակային խումբը), որոնց գիտական աշխատանքները վերաբերվում են գիտության տվյալ բնագավառի ժամանակակից թեմաներին և կունենան գումարային ամենաբարձր ազդեցության գործակից (Impact Factor) և ամենաշատ հղումներ:

Ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը կարելի է ստանալ ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» գրասենյակից կամ Հիմնադրամի կայքի միջոցով http://sdfund.sci.am.

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը 2013թ. ապրիլի 1-ից մինչև հունիսի 15-ը:

Հասցեն: 0019, Մարշալ Բաղրամյանի պող. 24, Երևան, Հայաստանի Հանրապետություն:

Հեռ. +(37410) 527530, +(37410) 583691:

«Լավագույն գիտական աշխատանք»-ի համար Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ), Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) և Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) կողմից 2013թ. հայտարարած մրցույթին ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

1. հայցողի դիմում-հայտը,
2. գիտական խորհրդի որոշումը
3. անձնագրի և սոցիալական քարտի պատճենը,
4. բանկային անձնական հաշվի համարը
5. կենսագրական տվյալները (resume/CV),
6. վերջին հինգ տարում հրատարակված աշխատանքների ցանկը,
7. երաշխավորագրեր՝ տրված 3 մասնագետների կողմից (նախընտրելի է, որ նրանցից մեկը լինի արտասահմանից): Երաշխավորագրերը ներկայացնել մասնագետի ստորագրությամբ,

8. մրցանակի ներկայացվող աշխատանքը:

Փաստաթղթերը ներկայացնել մեկ օրինակով և էլեկտրոնային կրիչով: 5-6 կետերում նշված փաստաթղթերը պետք է վավերացված լինեն իրավասու մարմնի կողմից:

Եթե ներկայացվող աշխատանքը կատարված է համահեղինակությամբ, դիմում-հայտին անհրաժեշտ է կցել տեղեկանք, որն արտացոլի համահեղինակների մասնակցության չափը և ստորագրված լինի համահեղինակների կողմից:
Հայցերի պարզաբանման համար դիմել ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ»:
Երևան, 0019, Բաղրամյան պողոտա, 24, հեռ.՝ 52-75-30, 58-36-91

Մրցութային հանձնաժողով

Announcement

The National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA), World Armenian Congress (WAC) and the Union of Armenians in Russia (UAR), Ministry of Diaspora of the RA declare competition for the "Best Scientific Work" for young scientists (up to 35 years).

The prize is awarded in 12 different nominations

- physics
- mathemathics and mechanics
- technical sciences
- information
- chemistry
- biology
- history
- sociology and jurisprudence
- geology
- art, language and literature
- economic sciences
- armenology and ethnography

Winners will be awarded prize money in each nomonation and honorable diploma of NAS RA, WAC and UAR. The works published or patented only in 2011-2012 should be submitted.

Documents shall be submittied from 1april untill 15 June 2013.

Results of competition will be announced on September 2013.

The applicant can submit his work through any organization acting in the same field.

The list and samples of the documents required for submition are available at the office of the "Science Development Foundation" NAS RA and through the website of the Foundation (http: // sdfund.sci.am)

Address: 0019, Marshal Bagramyan ave 24, Yerevan, RA

Tel: + (37410) 527530, + (37410) 583691

Competition committee

ՀՀ ԳԱԱ, ՀՀԿ և ՌՀՄ սահմանած «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթի

ԴԻՄՈՒՄ- ՀԱՅՏ

Ներկայացվող աշխատանքի անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

_____

_____

Հայցող կազմակերպությունը (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

_____

(կազմակերպության անվանում)

Աշխատանքի հեղինակը _____

(անուն, ազգանուն)

Համահեղինակ (ներ) _____

(անուն, ազգանուն)

Հեղինակի աշխատանքի վայրը _____

(կազմակերպության անվանում,պաշտոն)

Աշխատանքի վայրի (կազմակերպության) հասցեն և փոստային ինդեքսը

_____

Հեռախոս _____ Բջջային _____Ֆաքս _____

Էլ.փոստ _____

Աշխատանքի բնագավառը՝

□ ֆիզիկա

□ մաթեմատիկա և մեխանիկա

□ ինֆորմատիկա

□ տեխնիկական գիտություններ

□ քիմիա

□ կենսաբանություն

□ պատմություն

□ սոցիոլոգիա և իրավագիտություն

□ երկրաբանություն

□ արվեստ, լեզու և գրականություն

□ տնտեսագիտություն

□ հայագիտություն և ազգագրություն

Մրցանակի ներկայացվող աշխատանքին վերաբերող ստորև նշված 4 հարցերը հակիրճ պարզաբանել երեք էջի վրա:

1. Աշխատանքի էությունը - 1.5 էջ
2. Հայցողի գործունեության ոլորտը – 0.25 էջ
3. Հայցող կազմակերպության գործունեության ոլորտը – 0.25 էջ
4. Ներկայացված աշխատանքից սպասվելիք արդյունքները և հեռանկարները (արդիականությունը) – 1էջ

Հայցողի հասցեն և փոստային ինդեքսը

_____

Հեռախոս_____Բջջային_____Ֆաքս_____

Էլ.փոստ _____

Հայցման ամսաթիվը _____

Հայցողի ստորագրությունը _____